«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

4 Հուլիսի 2024, N 13 - 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԱՐԶԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող մարզական խմբակների և հատուկ բժշկական խմբերի վերանայման մասին» հարցը, **հաշվի առնելով**, որ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով սահմանված են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման պետական երաշխիքներ և «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդումը պարտադիր է ուսումնառության ամբողջ ընթացքում, **արձանագրելով**, որ մարզական խմբակների առկայությունը թույլ է տալիս համալսարանում ակտիվացնել արտալսարանային մարզական կյանքը՝ կազմակերպել ներբուհական մարզական խաղեր, որի արդյունքում ձևավորվող հավաքական թիմերը մարզվում և մասնակցում են տարբեր միջբուհական, հանրապետական և միջազգային մարզական միջոցառումների, միևնույն ժամանակ **կարևորելով** բակալավրի կրթական ծրագրերի բարձր կուրսերի ուսանողների և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների ֆիզիկական դաստիարակության անընդհատականության ապահովման, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքների տրամադրման անհրաժեշտությունը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. 2024-2025 ուսումնական տարում ձևավորել 8 մարզական խմբակ, այդ թվում՝ 2 վոլեյբոլի, 2 բասկետբոլի, 1 բազկամարտի և ուժային մարզումների, 1 ֆուտզալի, 1 հրաձգության, 1 սեղանի թենիսի:

2. 2024-2025 ուսումնական տարում ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնին հատկացնել 1024 ժամ մարզական խմբակների մարզիչներին տրամադրելու նպատակով:

3. 2024-2025 ուսումնական տարում ձևավորել 2 հատուկ բժշկական խումբ և ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնին հատկացնել 128 ժամ տվյալ խմբում պարապմունքները կազմակերպելու համար:

4. Ուսումնական բաժնին՝ UMS հարթակում ձևավորել 2 հատուկ բժշկական խումբ (64-ական ժամով) և 8 մարզական խմբակ (128-ական ժամով):

5. Ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնին՝ իրականացնել մարզական խմբակներ հաճախող ուսանողների հստակ հաշվառում և տրամադրել մարզական խմբակների պարապմունքների անցկացման ժամանակացույց և տարեկան օրացուցային պլան:

6. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Վ. Գրիգորյան**

2024 թ. հուլիսի 4
Երևան